



Տարիներ առաջ ես ունեի մի քսուք, որն օրվա բոլոր պահերի Տուխնդիրների համար էր և դա այդ տարիների համար նորմալ էր: Բայց ես ունեի չոր մաշկ ու չնայած «բեյբի ֆեյս» դիմագծերիս, ունեի վախ, որ չորությունը շուտով կդառնա կնժիռների պատճառ: Իսկ թարմ, փայլուն մաշկիցս հրաժարվել չէի ուզում, նույնիսկ տարիներ անց:

Մեր մոլորակն ապրում է սթրեսային անթիվ-անհամար լուրերով, բայց գեղեցկության աշխարուհում լավ լուր կա. Մեծանալն այսօր արդեն չի նշանակում ծերանալ: Մարդիկ ապրում են ավելի երկար և արտաքուստ շատ ավելի երիտասարդ են, քան նախկինում էին:

Երիտասարդ մնալուն նպաստում են, իհարկե, նաև խնամքն ու էսթետիկ միջամտությունները, որոնք կարող են ունենալ որքան դրական, այնքան էլ բացասական ազդեցություն:

Այժմ մաշկի խնամքը դարձել է անձայրաժիր բիզնես՝ անվերջ անուններով ու բազմաթիվ տեսակներով: Ուզում ես փորձել ամեն ինչ: Ու եկավ մի պահ, երբ հասկացա խնամքի անվերջության մեջ կվերջանան ոչ միայն միջոցներս, այլև մաշկս կարող է ավելի վատանալ: Եվ այս բազմազանության մեջ մարքեթինգի գոհ չդառնալու համար հարկավոր էր ծանաչել սեփական մաշկը,

հասկանալ նրա պահանջները, կարողանալ «կարդալ ու հասկանալ» պրոդուկտների բաղադրությունը և, ի վերջո, կատարել ճիշտ ընտրություն:

Պրոդուկտների վրա բաղադրիչները սովորաբար գրված են մանրատառ և անհասկանալի: Մի օր հասկացա, թե որքան կիեշտանար կյանքը, եթե ունենայինք օգնական՝ մաշկի խնամքին և բաղադրիչներին վերաբերող հայերեն պարզ ուղեցույց: Երկար տարիների ցանկությունս իրականացնելու համար պետք էր այս օգտակար գաղափարի շուրջ համախմբել մաշկի խնամքը կարևորող պրոֆեսիոնալներին:

Թեմայի հետ առաջին ասոցիացիան «Բուրմունքն» էր, ովքեր տարիներ ի վեր գնահատելով մաշկի գրագետ խնամքը, ոգևորված միացան նախագծին, ուղեցույցի բովանդակության համար հարկավոր էր մասնագետ՝ զինված տեսական ու գործնական ժամանակակից գիտելիքներով՝ նա մաշկաբան Հասմիկ Գյուլնազարյանն է: Իսկ մեր ցանկությունները, մտքերն ու տեքստերն ուղեցույցի վերածելու համար մեզ հարկավոր էր Newmag-ը:

Եվ ահա ստեղծվեց Դյուֆէն. մաշկի խնամքի հայկական առաջին ուղեցույցը: Այն թեթև է և հարմար՝ ամեն պահի ձեռքի տակ ունենալու համար: Բացի խնամքի հիմնական բաղադրիչներից, Դյուֆէն կօզնի նաև պարզել ձեր մաշկի տեսակը և գրագետ խնամել այն: Նաև ներառել ենք սթիքերներ, որոնք կօզնեն խնամքի հերթականության հարցում:

Դյուֆէն եկել է, որ ձեր հետագա գնումները դառնան օգտակար ու մտածված, մաշկն էլ լինի խնամված ու միշտ երիտասարդ:

Արևիկ Ուդումյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաշկի տեսակները	4
Մաշկի առօրյա խնամքը	6
Մաշկի խնամքը՝ կախված կլիմայից	7

ԱԿՏԻՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Ազելաինաթթու	8
Բակուչիոլ	10
Գլիկոլաթթու	12
Հիարլորանաթթու	14
Վիտամին C	16
Վիտամին E	18
Նիացինամիդ	20
Կոլագեն	22
Պեպտիդներ	24
Սալիցիլաթթու	26
Ռետինոլ	28

ՕԺԱՆԴԱԿ ԲԱՂԱԴՐԻՉ

Սիլիկոններ	30
Գլիցերին	32
Պարաբեն	34
Վազելին	36
Բառարան (անձանոթ բառերի հուշում)	38

- ◆ Եթե տեսնում ես այս նշանը, ապա գնա բառարան:
- ☀ Առավոտյան օգտագործման համար
- 🌙 Երեկոյան օգտագործման համար

ՄԱՇԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տարբերում ենք մաշկի 4 հիմնական տեսակ՝ նորմալ, ճարպոտ, կոմբինացված և չոր:

Չոր մաշկ



- ⊙ Ծակոտիների քանակը քիչ է և թեթև արտահայտված
- ⊙ Գրեթե բացակայում է փայլը
- ⊙ Ավելի հաճախ է թեփոտվում, քան մյուս տեսակները
- ⊙ Ի տարբերություն մյուս տեսակների, ավելի շուտ է ծերանում
- ⊙ Ունի մեծ կախվածություն կլիմայական պայմաններից

Ճարպոտ մաշկ



- ⊙ Լայնացած, մեծ ծակոտիներ կարելի է նկատել դեմքի մաշկի 70% և ավելիի վրա
- ⊙ Մաշկի արտահայտված ճարպոտ փայլը մնում է օրվա կեսից ավելին
- ⊙ Հակված է բորբոքայն պրոցեսների
- ⊙ Ի տարբերություն մաշկի մյուս տեսակների, ավելի ուշ է ծերանում
- ⊙ Պետք է կարգավորել սննդակարգը

Նորմալ մաշկ



- ⊙ Այս տեսակի մաշկի ծակոտիների միջին քանակը հիմնականում տեղակայված է T-աձև հատվածում
- ⊙ Առողջ փայլ նկատելի է T-աձև հատվածում
- ⊙ Արագ հարմարվում է կլիմայական պայմաններին

Կոմբինացված մաշկ



- ⊙ Ունի 2 և ավելի տեսակ մաշկերին բնորոշ հատկություններ
- ⊙ Դժվար է ընտրել համապատասխան կոսմետիկ միջոց

*Զգայուն մաշկի տեսակ չի լինում:
Ցանկացած մաշկի տեսակ կյանքի որևէ
փուլում կարող է դառնալ զգայուն
կամ էլ ազատվել դրանից:*

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark[®]